ՆԱԽԱԳԻԾ-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2020թ. **N -----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N 178-Ն որոշմամբ հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 47.1 կետով.

«47.1. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գույքի օտարման դիմաց, որպես փոխհատուցում, պետության կողմից այդ քաղաքացիներին վարձակալության իրավունքով տրամադրված և այդ իրավունքները սահմանված կարգով գրանցված, չկառուցապատված հողամասերի, եթե այդ անձանց սեփականության օտարման դիմաց որևէ այլ փոխհատուցում չի տրամադրվել, ուղղակի վաճառքի գինը սահմանվում է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀՀ բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին» N 1746-Ն որոշմամբ հաստատված կադաստրային արժեքով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նախագծի հեղինակ՝
ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ **Արմեն Կոտոլյան**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրի վերաբերյալ» N 178-Ն որոշման նախագծում լրացում կատարելու համար հիմք են հանդիսացել հետևյալ հանգամանքները.

1. Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հանրության գերակա շահ ճանաչված գույքի օտարման դիմաց անձանց համապատասխան փոխհատուցում չի տրամադրվել, մասնավորապես՝ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գույքի դիմաց տրվել է վարձակալության իրավունքով հողամաս, չի տրվել որևէ դրամական փոխհատուցում, ինչը անհամաչափ է,
2. Սեփականության դիմաց որպես փոխհատուցում, հողամասի վարձակալության իրավունք ունեցող անձինք որևէ կերպ չեն կարողանում իրացնել իրենց վարձակալության իրավունքը և լուծել սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու կամ ստեղծելու խնդիրներն այն պատճառով, որ 2011 թվականին ուժի մեջ մտած հողային օրենսգրքի փոփոխությունների արդյունքում արգելվում է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման նպատակով վարձակալության կամ անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելը: Ստացվում է, որ նման փոխհատուցում ստացած անձը պետությանը կամ համայնքին պետք է վճարի հողամասի վարձավճար, սակայն այդ հողամասում չի կարող կառուցել շենքեր, շինություններ և ունենալ սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու օրինական ակնկալիք: Այսինքն, կարելի է ընդգծել, որ անձը իր սեփականության դիմաց ոչինչ չի ստացել, դեռ ավելին՝ ստանձնել է պետությանը կամ համայնքին հողամասի վարձավճար վճարելու աննպատակ պարտավորություն:
3. Հողամասի վրա քաղաքաշինական գործունեություն իրականացնելու և դրա արդյունքում ստեղծված գույքի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը գրանցելու համար վերջիններս այդ հողամասի նկատմամբ պետք է ունենան սեփականության իրավունք: Այդ քաղաքացիները գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և արդեն իսկ հանդիսանում են տուժող կողմ, նրանց համար կադաստրային արժեքի քառակին կամ եռակին վճարելը անիրատեսական է և կարող է առաջացնել հավելյալ ֆինանսական ծանրաբեռնվածություն և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ հաստատված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը որոշակիորեն կթեթևացնի քաղաքացիների ֆինանսական

բեռը, զերծ կպահի այդ անձանց սոցիալական վիճակի էլ ավելի վատթարացումից, ուստի Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2020 թվականի ծրագրում լրացում կատարելու մասին» որոշման նախագիծը:

Նախագծի հեղինակ՝
ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ **Արմեն Կոտոլյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 178-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 178-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2019 թվական դեկտեմբերի 25-ի N 178-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Նախագծի հեղինակ՝
ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ **Արմեն Կոտոլյան**